**«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ**

**Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն**

**31 դեկտեմբերի 2009թ.**

## Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն....................................................................1

Համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն................................2

Համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.................................3

Համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն......................................................4

PRICEWATERHOUSECOOPERS

**PricewaterhouseCoopers Armenia LLC**
# 1 Northern Ave.
Business Center NORD, 5th floor
Yerevan 0001, Republic of Armenia
Telephone: (37410) 592 159
Facsimile: (37410) 501 341
www.pwc.com/am

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի բաժնետերերին և տնօրենների խորհրդին.**

Կից ներկայացվող ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմվել են «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») և վերջինիս դուստր ձեռնարկությունների (այսուհետ միասին՝ «Խումբ») 2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Վերոհիշյալ ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն Ընկերության ղեկավարության պատասխանատվությունն է: Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել, թե արդյոք ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են համախմբված ֆինանսական հաշվետվություններին, որոնց հիման վրա դրանք կազմվել են:

Մենք աուդիտի ենք ենթարկել Խմբի 2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնց հիման վրա պատրաստվել են ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: 2010թ. մայիսի 31-ի մեր եզրակացությունում մենք կարծիք ենք արտահայտել առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնց հիման վրա կազմվել են ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ճշմարիտ են ներկայացնում, բոլոր էական առումներով, Խմբի ֆինանսական վիճակը առ 31 դեկտեմբերի 2009թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան, բացառությամբ այն փաստի, որ Ընկերությունը չի ներառել համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը և համապատասխան ծանոթագրությունները առ 1 հունվարի 2008թ., ինչը պահանջվում է հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 1-ով («*Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում*»), երբ կազմակերպությունը կատարում է հետընթաց վերահաշվարկ կամ երբ այն վերադասակարգում է հոդվածները իր ֆինանսական հաշվետվություններում:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են, համախմբված ֆինանսական հաշվետվություններին, որոնց հիման վրա դրանք կազմվել են և որոնց վերաբերյալ մենք վերապահումներով դրական կարծիք ենք արտահայտել:

Խմբի ֆինանսական վիճակի, տվյալ ժամանակահատվածում գործունեության արդյունքների և մեր անցկացրած աուդիտի շրջանակների վերաբերյալ առավել հստակ պատկերացում կազմելու համար, ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկել այդ ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմելու համար հիմք հանդիսացած համախմբված ֆինանսական հաշվետվությունների և մեր աուդիտորական եզրակացության հետ միասին:

Ալտաֆ Տապիա
Գործադիր գործընկեր

Վիկտոր Նալբանդյան
Ավագ մենեջեր, աուդիտի բաժին

PricewaterhouseCoopers Armenia LLC.

31 մայիսի, 2010թ.
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն

*Այս փաստաթուղթը իրենից ներկայացնում է անգլերեն տարբերակի հայերեն թարգմանությունը:*
*Հայերեն և անգլերեն տարբերակների անհամապատասխանության դեպքում միանշանակորեն գերակայում է անգլերեն տարբերակը:*

The firm is an authorised licensee of the tradename and logo of PricewaterhouseCoopers.

| *մլն. ՀՀ դրամ* | 31 դեկտեմբերի 2009թ. | 31 դեկտեմբերի 2008թ. (վերահաշվարկված) |
|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | |
| Հիմնական միջոցներ | 303,469 | 258,791 |
| Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ | 22,892 | 31,865 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | 356 | 840 |
| Տրամադրված փոխառություններ | - | 470 |
| Ավանդներ բանկերում | - | 400 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 6,814 | 5,686 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 186 | 59 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **333,717** | **298,111** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | |
| Պաշարներ | 10,527 | 6,752 |
| Վաճառքի համար մատչելի ներդրումներ | 109 | 500 |
| Տրամադրված փոխառություններ | 533 | 387 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 24,433 | 16,644 |
| Շահութահարկի գծով կանխավճար | 848 | 137 |
| Ավանդներ բանկերում | 441 | - |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 7,585 | 21,703 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **44,476** | **46,123** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | **378,193** | **344,234** |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | |
| Կանոնադրական կապիտալ | 312,072 | 312,072 |
| Կուտակված վնաս | (2,732) | (1,017) |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | **309,340** | **311,055** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | |
| Վարկեր և փոխառություններ | 16,930 | 8,292 |
| Ակտիվներին առնչվող շնորհներ | 594 | 633 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **17,524** | **8,925** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | |
| Վարկեր և փոխառություններ | 23,725 | 4,938 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 27,604 | 19,316 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | **51,329** | **24,254** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **68,853** | **33,179** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | **378,193** | **344,234** |

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է տնօրենների խորհրդի անունից 2010թ. մայիսի 27-ին:

Կարեն Կարապետյան
Վարչության նախագահ - Գլխավոր տնօրեն

Արմեն Ունանյան
Գլխավոր հաշվապահ

| *մլն.ՀՀ դրամ* | 2009թ. | 2008թ. (վերահաշվարկված) |
|---|---|---|
| Հասույթ | 115,117 | 106,956 |
| Վաճառքի ինքնարժեք | (111,930) | (96,155) |
| **Համախառն շահույթ** | **3,187** | **10,801** |
| Այլ գործառնական եկամուտ | 440 | 2,538 |
| Ընդհանուր և վարչական ծախսեր | (7,287) | (6,908) |
| Այլ գործառնական ծախսեր | (5,585) | (2,010) |
| **Գործառնական (վնաս)/շահույթ** | **(9,245)** | **4,421** |
| Ֆինանսական եկամուտ | 8,822 | 1,034 |
| Ֆինանսական ծախսեր | (2,071) | (2,569) |
| **(Վնաս)/Շահույթ նախքան հարկումը** | **(2,494)** | **2,886** |
| Շահութահարկի գծով փոխհատուցում | 779 | 595 |
| **Տարվա (վնաս)/շահույթ** | **(1,715)** | **3,481** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ (ՎՆԱՍ)/ԵԿԱՄՈՒՏ** | **(1,715)** | **3,481** |

| *մլն. ՀՀ դրամ* | Կանոնադրական կապիտալ (վերահաշվարկված) | (Կուտակված վնաս)/ Կուտակված շահույթ (վերահաշվարկված) | Ընդամենը (վերահաշվարկված) |
|---|---|---|---|
| Նախկինում հաշվարկված մնացորդը առ 1 հունվարի 2008թ. | 182,538 | (7,615) | 174,923 |
| Վերահաշվարկում | (4,524) | 3,117 | (1,407) |
| **Մնացորդը առ 1 հունվարի 2008թ. (վերահաշվարկված)** | **178,014** | **(4,498)** | **173,516** |
| Ընդամենը համապարփակ եկամուտ 2008թ. | - | 3,481 | 3,481 |
| Բաժնետոմսերի թողարկում | 134,058 | - | 134,058 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008թ. (վերահաշվարկված)** | **312,072** | **(1,017)** | **311,055** |
| Ընդամենը համապարփակ վնաս 2009թ. | - | (1,715) | (1,715) |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009թ.** | **312,072** | **(2,732)** | **309,340** |

| *մլն. ՀՀ դրամ* | **2009** | **2008 (վերահաշվարկված)** |
|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| (Վնաս)/Շահույթ մինչև շահութահարկով հարկումը | (2,494) | 2,886 |
| **Ճշգրտումներ.** | | |
| Մաշվածություն | 10,469 | 9,423 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկում | 178 | 1,056 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման վերականգնում | (90) | (1,540) |
| Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս | 1,130 | 385 |
| Դեբիտորական հաշիվների ավելացում՝ պետական սուբսիդավորման ծրագրից | - | (400) |
| Ստացված շնորհներից եկամուտ | (44) | (41) |
| Արտարժույթի փոխարկման փոխարժեքի տարբերություններ | 483 | 598 |
| Ֆինանսական եկամուտ | (5,629) | (1,034) |
| Ֆինանսական ծախսեր | 2,071 | 1,930 |
| Պահուստների փոփոխություն | (146) | (502) |
| **Գործառնական դրամական միջոցների հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները** | **5,928** | **12,761** |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի (աճ)/ նվազում | (8,387) | 45,564 |
| Պաշարների աճ | (2,950) | (807) |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի աճ/(նվազում) | 5,974 | (8,624) |
| **Շրջանառու կապիտալի փոփոխություններ** | **565** | **48,894** |
| Վճարված շահութահարկ | (1,060) | (454) |
| Վճարված տոկոսներ | (572) | (2,171) |
| **Գործառնական գործունեությամբ օգտագործված/գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր** | **(1,067)** | **46,269** |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հիմնական միջոցների գնում | (48,629) | (116,758) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | 122 | 1,123 |
| Բանկերում ժամկետը լրացած ավանդների մարում | 1,357 | 784 |
| Ստացված տոկոսներ | 649 | 1,084 |
| Պարտատոմսերի օտարում/(ձեռքբերում) | 875 | (2,133) |
| Տրամադրված փոխառություններ | (146) | (365) |
| **Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր** | **(45,772)** | **(116,265)** |
| **Դրամական միջոցներ ֆինանսական գործունեությունից** | | |
| Հոսքեր տրամադրված փոխառությունների մարումից | 498 | 784 |
| Հոսքեր վարկերից և փոխառություններից | 37,435 | 10,436 |
| Վարկերի և փոխառությունների մարում | (6,995) | (66,599) |
| Սովորական բաժնետոմսերի թողարկում | - | 134,058 |
| **Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից** | **30,938** | **78,679** |
| Փոխանակման փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | 1,783 | 106 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին** | **21,703** | **12,914** |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին** | **7,585** | **21,703** |